«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը

սաների զարգացման գործում

Դաստիարակ՝ Վարդուհի Ալավերդյան

Մանկապարտեզ՝ <<ՀՀ Վայոց Ձորի մարզի Արենի համայնքի ՝ Արփի>> ՀՈԱԿ մանկապարտեզ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ.....5

ԳԼՈՒԽ 2. ՆՊԱՏԱԿԻՑ ԲԽՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀՍՏԱԿԵՑՈՒՄ 7

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ.....8

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.....9

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ 10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....16

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Էքսկուրսիաների և մշակույթային այցերի դերը սաների զարգացման գործում>> թեմայի ընտրությունը պայմանավորված է նրանով , որ խիստ կանորում ենք մշակույթային այցերի , էքսկուրսիաների և առհասարակ մշակույթի դերը երեխայի ընդհանուր զարգացման, աշխարհայացքի ձևավորման գործում , շեշտը դնելով հատկապես հայրենասիրական դաստիրակության և մեր ազգային մշակույթի ծանոթացման կարևորագույն խնդիրներին: Մեր ժողովուրդն առանց հայրենասիրության այն է , ինչ որ մարմին՝ առանց հոգու: Դա մայրն է իր նման փրկարար մի շարք առաքինությունների ՝ գաղափարականության , անձնվիրության , արիության: Գարեգին Նժդեհ ՝<<Հայրենասեր լինել չի կարելի առանց հայրենիքի հետ անձնական կապ զգալու ՝ չիմանալով թե ինչպես են այն սիրել ու փայփայել մեր նախնիները , մեր հայրերն ու պապերը >> :

<<Միայն այն ժամանակ երջանիկ օրեր կգան մեզ համար , եթե բոլորը գործեն հօգուտ համընդհանուր բարօրության >>: Հայտնի մանկավարժ Կոմենսկին գրելով այս տողերը , ընդգծում է մարդկանց օգնելու ձգտում սերմանելը , որպես այրենասիրական դաստիրակության կարևորագույն խնդիրներից մեկը :

Հայտնի մանկավարժ Վ. Սոխումլիսկին իր հայրենադաստիրակության հետազոտություններում , ընդգծում է ոլորտի արդիականացման խնդիրներն ու դժվարություններն ,և գտնում ,որ <<Հայրենիքի նկատմամբ սերը կամքի ուժի է վերածվում այն ժամանակ , երբ նրա գիտակցության մեջ ամրապնդվում են հայրենի վայրերի և լեզվի հետ կապված կերպարներ , երբ առաջանում է հպարտության զգացում , որ այս ամենը քո երկինքն է >> :

Ժամանակակից հանրակրթության հրատապ խնդիրներից է ՝ սաներին ծանոթացնել հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգությանը , նպաստել երեխաների հայրենասիրական դաստիրակությանը : Եկող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո ՝ ժողովրդագրական , ազգային ,մշակութային , ընտանեկան , կրթական , հասարակական , սոցիալական և այլն :

Ն.Վ. Տատիշչեն ասել է . <<Երեխաների մեջ պետք է ձևավորել գիտելիքներ հայրենի հողի մասին և կապվածության զգացում այն վայրերին , որտեղ նրանք ծնվել են և որոնց ունեն վառ զգացմունքային փորձառություններ : Մանկության այս վառ տպավորություններից և հույզերից աստիճանաբար աճում է սիրո զգացումը դեպի հայրենի երկիրը , դեպի հայրենիք: Սա էլ հենց հայրենասիրական դաստիարակության գաղափարների աղբյուր է>>: Հայրենասիրությունը սեր է ընտանիքի , հայրենի հողի ,հայրենիքի հանդեպ:Երեխան հայրենասեր չի ծնվում , նա դառնում է :

Ա.Ս. Մակարենկոն գրել է . <<Երեխաների հայրենասիրական դաստիարակությունը մեր կյանքի ամենակարևոր ոլորտն է : Մեր երեխաները , մեր երկրի ապագա քաղաքացիներն են: Նրանք պատմություն են կերտելու : Մեր երեխաները ապագա հայրեր և մայրեր են , նրանքել են մեծացնելու իրենց երեխաներին: Մեր երեղաները պետք է մեծանան գերազանց քաղաքացիներ: Մեր երեխաները , մեր ծերությունն են, ճիշտ դաստիարակությունը մեր

երջանիկ ծերությունն է, վատ դաստիարակությունը մեր ապագա վիշտն է մեր մեղքն է ամբողջ երկրի առաջ>>:

ԳԼՈՒԽ 1

ՆՊԱՏԱԿԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Նախադպրոցական տարիքի երեխաների բարոյական և հայրենասիրական զգացմունքների ձևավորման գործում առաջնահերթ ուղղություններից մեկը դարձել է նախադպրոցական տարիքի երեխաների ծանոթացումը ազգային և մշակութային ժառանգությանը , հայրենի երկրի պատմությանը:

Նախադպրոցական հիմնարկներում էքսկուրսիաները և զբոսանքները պետք է շատ հաճախ կազմակերպվեն :Էքսկուրսիաները , որպես կրթական և դաստիրակչական աշխատանքի ձև սկսել են գործել Կոմեսկոս գաղափարի ազդեցությամբ : Էքսկուրսիաները պետք է լինեն հասցեական և նպատակային :

Հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները , էքսկուրսիայի ժամանակ պետք է միշտ կապ հաստատել երեխաների հետ, ուշադրությունը դեպի իրեն հրավիրելով: Նպատակային էքսկուրսիաների ընթացքում ձևավորվում են ՝ սեր հայրենիքի նկատմամբ , դաստիրակվում է հոգատար վերաբերմունք դեպի հայրենի բնաշխարհը , զարգանում է աշխարհաճանաչողությունը , հետաքրքրություն է առաջանում մշակույթի և հոգևոր արժեքների նկատմամբ:

Էքսկուրսիաները և նպատակային զբոսանքները լինում են ինչպես ընհանուր այնպես էլ թեմատիկ:

Թեմատիկ էքսկուրսիաները ունեն հստակ ուղղվածություն:

Էքսկուրսիաները կարող են լինել տարածքի որևէ թաղամասում, թանգարանում , բնակավայրից դուրս, սրբավայրերում: Էքսկուրսիան կարելի է կիրառել դաստիարակչական նպատակով:

Էքսկուրսիա այցելելուց առաջ, մանկավարժը անց է կացնում թեմատիկ զրույց, հետո քննարկում է այն: Դաստիարակչական էքսկուրսիան, դա դաստիարակչական գործընթացի կազմակերպման մի ձև է, պարապմունքի մի տեսակ:

Գիտակցելով, որ իրական աշխարհի ճանաչողական սկսվում է զգայությունից, ցանկացած ուսումնական պրոցեսում մեծ տեղ է տրվում էքսկուրսիաներին, մշակույթային այցերին:

Իրական աշխարհի զգայություններն ու ընկալումները համապատասղանորեն իմաստավորվում և վերամշակվում են մեր գիտակցության մեջ:

Մեր աչքին միանում են մյուս զգայարանները և մտաածողության գործունեությունը: Զննական ընկալումը հեշտացնում էերեխաների գիտելիքների յուրացման պրոցեսը: Քանի որ երեխաների մտածողությունը զարգանում է կոնկրետից դեպի վերացականը, ուստի զարգացման վաղ էտապներում, նրանք մտածում են ավելի շատ պատկերներով, քան

հասկացողություններով: Հասկացողությունը և վերացական գաղափարները երեխաների գիտակցության մեջ ավելի հեշտ են հասնում, եթե դրանք ամրապնդվում են կոնկրետ փաստերով, օրինակներով ու պատկերներով:

Այս մեթոդը օգտագործվում է տարբեր բնագավառներում և հետապնդում է ինչպես կրթական այնպես էլ դաստիարակչական նպատակներ:

Էքսկուրսիաները, նպատակային զբոսանքները մանկավարժին հնարավորություն է տալիս կոնկրետ ու վառ փաստերի վրա երեխանեին ցույց տալ ուսումնասիրվող առարկաների, երևույթների միջև եղած կապերը, մարդու վերստեղծով և վերշինող ուժը: Այս բոլորը նպաստում են երեխաների աշխարհճանաչողության ու դիտողականության զարգացմանը, նրանց մեջ խոր հետաքրքրություն են առաջացնում դեպի իրենց շրջապատը, ամրապնդվում է հոգատար վերաբերմունքը շրջապատի և հայրենի երկրի նկատմամբ: Էքսկուրսիաները ընդլայնում են երեխայի մտահորիզոնը, միտքը հարստացնում են նոր տպավորություններով, հետաքրքրություն են առաջացնում դեպի իրենց շրջապատը: Էքսկուրսիաները բացառիկ կարևոր նշանակություն ունեն դաստիարակչական տեսակետից: Դրանք երեխայի մեջ զարգացնում են ուշադրություն ու դիտողականություն, մշակում են գիտակցական կարգապահություն, կազմակերպվածություն ՝ նախակրթարանից դուրս իրենց պահելու, մանկավարժի կարգադրությունները ժամանակին, ճիշտ կատարելու ունակություն:

Էքսկուրսիայի միջոցով երեխաները ծանոթանում են և զգում են հայրենի բնության գեղոցկությունը և ավելի շատ են սիրում ու գնահատում այն:

Էքսկուրսիայի ժամանակ զարգանում է երեխաների էսթետիկական ճաշակը:

Էքսկուրսիայի ընթացքում ձևավորվում են բարոյական նորմեր ՝ ընկերասիրություն, կոլեկտիվիզմ, փոխօգնություն:

Էքսկուրսիայի ժամանակ բացահայտվում է երեխաների բնավորությունը, նոր ընդունակություններ են ի հայտ գալիս:

Էքսկուրսիան նպաստում է երեխաների նախորոք ստացած գիտելիքների ամրապնդմանը: Թեմային հաջորդող էքսկուրսիան հիմք է հանդիսանում նոր պարապմունքի ընկալման համար:

Էքսկուրսիա գնալուց առաջ մանկավարժը պետք է կազմի էքսկուրսիայի պլանը, որը կարևոր նշանակություն ունի հետագա աշխատանքը ճիշտ կազմակերպելու համար: Պլան կազմելիս պետք է հաշվի առնել հետևյալ հիմնական հարցերը.

1. Էքսկուրսիայի թեման
2. Գիտելիքների համառոտ շարադրանքը, որը երեխաները պետք է ստանան էքսկուրսիայի ընթացքում
3. Էքսկուրսիայի ընթացքն ու հաջորդականությունը, էքսկուսիայի ընթացքում շոշափվող հիմնական հարցերը
4. Էքսկուրսիայի վերջում անցկացվում է ամփոփիչ զրույց:

ԳԼՈՒԽ 2.

ՆՊԱՏԱԿԻՑ ԲԽՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀՍՏԱԿԵՑՈՒՄ

Նախադպրոցական երեխաների ազգային-հայրենասիրական դաստիրակության ուղղությամբ աշխատանքների կատարելագործման խնդիրները, ուղղիներն ու միջոցները անհրաժեշտ է բացահայտել, որովհետև սա այն տարիքն է շատ նպաստավոր է հայրենասիրության զգացմունքների դաստիարակման համար, քանի որ հենց այս ժամանակ է ստեղծվում մշակութային և արժեքային կողմնորոշումների ձևավորումը:

Դա իրագործվում է նաև էքսկուրսիաների միջոցով: Պետք է մշակել նախադպրոցական տարիքի երեխաների հայրենադաստիարակությանը նպաստող ճանաչողական գործունեության կազմակերպման բովանդակությունը, մեթոդները:

1. Դաստիարակել հայրենասիրության գաղափարը
2. Մեծացնել հետաքրքրությունները հոգևոր արժեքների և ազգային տոների նկատմամբ
3. Սիրել, պահպանել հայրենի բնությունը :

Պետք է կազմակերպվեն հաճախակի էքսկուրսիաներ, որոնք կունենան հայրենադաստիարակչական բնույթ:

- Ձևավորել բարոյական և հայրենասիրական որակներ ՝ քաջություն, խիզախություն, հայրենիքը պաշտպանելու ցանկություն:
- Ամրապնդել գիտելիքները հայրենիքի, տեսարժան վայրերի մասին:Ծանոթացնել ճարտարապետական հուշարձաններին :
- Ծանոթացնել Հայաստանի դրոշին,զինանշանին:
- Նշումներ կատարել տոների, ազգային ծեսերի, հիշատակի օրերի մասին:

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Էքսկուրսիաների և նպատակային զբոսանքների ժամանակ կիրառվում են հետևյալ մեթոդները `

1. Կրթական
2. Զարգացնող
3. Դաստիարակչական

Կրթական ոլորտը դա գիտելիքների խորացումն է , առանձին առարկաների և երևույթների մասին պատկերացում կազմելը:

Զարգացնող դիտումները կատարելու ժամանակ ուշադրության կենտրոնացումն է, հիշողության և կարողությունների զարգացումը:

Դաստիարակչական-հայրենասիրական դաստիարակություն, գեղագիտական դաստիարակություն, բնության և մշակույթի նկատմամբ դաստիարակություն:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Էքսկուրսիաները այցելություններ են դեպի տեսարժան վայրեր, թանգարաններ, պատմամշակութային հուշարձաններ: Էքսկուրսիաների, նպատակային զբոսանքների, տեմատիկ մշակութային այցերի դերը նախադպրոցական երեխայի դաստիարակության գործընթացում մեծ նշանակություն ունեն : Այդ ընթացքում ինչ տեսնում են երեխաները,տպավորվում է նրանց գիտակցության մեջ: Էքսկուրսիաները ունեն ճանաչողական մեծ նշանակություն, հատկապես բարոյահայրենասիրական դաստիարակության գործում:

Նախադպրոցական տարիքի երեխաները ավելի խորությամբ ճանաչում են իրենց հայրենիքը, ծննդավայրը, ծանոթանում են բնությանը և մշակույթին:

Էքսկուրսիաները նպաստում են ազգային արժեքների ամրապնդմանը, հարստացնում են գիտելիքները, զարգացնում են հետաքրքրությունը: Դաստիարակվում է սեր դեպի բնությունը, հուշարձանները նաև նպաստում է միջանձնային շփումներին:

Այսօր կարևոր է, որ հայրենասիրական դաստիարակության գործընթացն ուղեկցվի մատաղ սերնդին հարազատ երկրի ու ժողովրդի պատմական, պաշտպանական, մշակութային և հոգևոր արժեքների հետ կապող անմիջական շփումներով:

Օրինակ՝ կազմակերպել թանգարան- նախադպրոցական հաստատության կապն ամրապնդող համատեղ միջոցառումներ ՝ էքսկուրսիաներ, որտեղ երեխաները կծանոթանան իրենց հայրենիքի պատմությանը: Նրանց մեջ սիրո և հպարտության զգացում կառաջանա իրենց հայրենիքի հանդեպ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱԳ ԽՈՒՄԲ

Ինտեգրված պարապմունք, խոսքի զարգացում, նկարչություն, էքսկուրսիա:

Թեմա ՝ Իմ հայրենիքը հայաստանն է .

<<Իմ երկիրը>>

Տեսակը՝ պատմում նկարների միջոցով:

Կրթական

Հստակեցնել և ամրապնդել երեխաների գիտելիքները Հայաստանի Հանրապետության վերաբերյալ:Ամրապնդել Հ.Հ. խորհրդանիշների ՝ դրոշի, զինանշանի և օրհներգի մասին երեխաների գիտելիքները: Նկարների միջոցով ծանոթացնել Երևանի տեսարժան վայրերին , հուշարձանների:

Դաստիրակչական

Արթնացնել հայրենասիրական զգացումներ և հետաքրքրություն Հայաստանի անցյալի և ներկայի նկատմամբ, ինչպես նաև գիտակցական վերաբերմունք ձևավորել հայրենիքի զգացողությունն ամուր պահելու առումով:

Զարգացնող

Զարգացնել կապակցվածխոսք կառուցելու հմտություններ, ամրապնդել հիշողությունը:

Անհրաժեշտ պարագաներ

ՀՀ դրոշը, զինանշանը, ՀՀ օրհներգի ձայնագրությունը , Երևանի տեսարժան վայրերը նկարագրող նկարներ:

Ակնկալվող վերջնարդյունքներ- Կզարգանա նկարի բովանդակությունը հասկանալու , տարբեր նկարներ համեմատելու կարողությունը , կնդլայնվի պատկերացումները իր հայրենիքի ,քաղաքի, գյուղի մասին, կամրապնդվի գիտելիքները խորհրդանիշների մասին:

Կապը չափորոշիչների հետ – Ի-ա,բ,գ,դ,ե ,ԽՀ-ա ,բ , ԻՍԱ- ա,գ,ե,ը, Շ-թ:

Խթանման փուլ-Բաց հարցերի միջոցով խթանել նոր թեման:

- Ինչ եք հասկանում հայրենիք ասելով:
- Ինչպես են անվանում մեր հանրապետությունը...
- Ինչ է նշանակում Հայաստան բառը մեր բոլորի համար ...
- Քարտեզի վրա ցույց տվեք մեր հայրենիքը:

- Եկեք քարտեզի վրա ցույց տանք Հայաստանի տարածքը և պատմենք՝ ինչեր կան մեր երկրում (Սևանա լիճ, բարձր և ցածր բազմաթիվ լեռներ, մեծ ու փոքր գետեր, անտառներ) և այլն:

Իմաստի ընկալում

Մեր հայրենիքի խորհրդանիշներն են Հայաստանի պետական դրոշը, զինանշանը, օրհներգը:Զինանշանի արծիվը խորհրդանշում է , որ մենք իմաստուն ժողովուրդ ենք , առյուծը՝ ուժեղ ենք :Պատկերված են հայկական հզոր թագավորությունները՝ Արտաշեսյան, Բագրատունիների , Արշակունիների, Ռուբինյան: Մեջտեղում Արարատ լեռն է , վրան ջրհեղեղից փրկված Նոյան տապանը : Ներքևում ցորենի հասկերն են շղթայով միաձուլված: Սա էլ մերեռագույն դրոշն է՝ կարմիր , կապույտ ,ծիրանագույն ,որը ամրացված է գյուղապետարանի, մանկապարտեզի և այլ պետական շենքերի վրա : Ապա երեխաներին ցուցադրվեց Հայաստանի մի շարք գեղեցիկ վայրեր , պատմամշակույթային մեծ արժեք ներկայացնող կոթողներ պատկերող նկարներ: Հայաստանում է աճում ամենաքաղցրահամ խաղողը, դեղձը, ծիրանն ու նուռը: Հայաստանի մայրաքաղաքը Երևանն է : Այն աշխարհի հնագույն քաղաքներից է : Մենք հայրենիք ենք անվանում այն վայրը , ուր ծնվել ենք, որտեղ մեր ծնողներն են , պապիկներն ու տատիկները :

Երեխաներ եկեք մի քանի ոտանավորներ արտասանենք Հայրենիքի մասին .

Ինչքան էլ փորձեն կոտրեն մեր ոգին,

Տիրանալ հայոց սուրբ հողին ,

Դուք լավ իմացեք չի՝ ստացվելու,

Մենք թուրք շներին հող չունենք տալու:

Դե ելեք տղերք դեպի հաղթանակ ,

Թուրք ոսխներին տվեք ոտնատակ ,

Մենք մեր սուրբ հողում ամուր կանգնացներս ,

Իմ հայ ժողովուրդ մենք հաղթելու ենք :

Երեխաներ հիմա նայեք ցուցադրված պատկերաշատ նկարներին և փորձեք պատմություն հյուսել դրանց միջոցով : Նախապես երեխաներին բաժանեցի խմբի տվեցի մեկ նկար:Պատմությունը պետք է կազմված լինի 3-4 նախադասություններից :

Հնարավոր տարբերակներից մեկն սկսում է ,մյուսը շարունակում ,երրորդն ավարտում:

-Պատմության վերաբերյալ ինչ լրացումներ կարելի է կատարել ,

-Ինչի մասին չեն պատմել ընկերներդ , ինչ կուզեիր ավելացնել:

Վերջում ամբողջացնելով և ամփոփելով պատմությունը երեխաների հետ միասին վերնագրեցինք այն :

Կշռադատման փուլ

Երեխաները կարողացան հասկանալ նկարի բովանդակությունը , ճանաչել և տարբերել ՀՀ խորհրդանիշները և ճիշտ անվանել Հայաստանը ՝ որպես հայրենիք , Երևանը ՝ որպես Հայաստանի մայրաքաղաք:

Նուհի տնօրինության թույլատվությամբ կազմակերպեցինք էքսկուրսիա դեպի Արփի գյուղի դպրոց:Մեզ ուղեկցեցին խմբի երեխաների ծնողները:Նախնական զրույցի ժամանակ երեխաներին տվեցին հարցեր.՝

-Ինչ գիտեք մեր հայրենիքի գյուղի մասին :

-Ինչ ենք ուզում իմանալ դրանց մասին:

Ճանապարհին երեխաների ուշադրությունը հրավիրեցի գյուղապետարանի շենքի վրա , երեխաները արագ նկատեցին ,որ շենքի վրա ծածանվում է եռագույն դրոշը :Երեխաները նկատեցին նաև փողոցում և մայթեզրերին թափված աղբը, որի շուրջ նույնպես հնչեցին տարբեր հարցեր թ՛ե երեխաների և թ՛ե իմ կողմից :

Զբոսնեցինք դպրոցի այգում, որտեղ տեղադրված է ազգային հերոս ՝ Վահիկ Լևոնյանի արձանը : Երեխաները ծաղիկներ խոնհարեցին արձանի մոտ : Այնտեղ երեխաներին տրվեցին բաց ու փակ հարցեր :

Ով է Վահիկ Լևոնյանը : Ինչու ենք նրան հերոս անվանում : Մեր ժամանակների ինչ հերոսներ գիտեք և այլն: Այգում երեխաների ուշադրությունը գրավեց նաև բազմագույն ծաղիկները , որոնք խնամքով աճեցրել էր այգեպանը: Նև շատ գրավիչ էր այգու կատարյալ մաքրությունը և խնամված , փարթամ ծառերը : Վ. Լևոնյանի անունը կրող դպրոցի <<Փառքի սրահում>> մեզ դիմավորեցին դպրոցի տնօրենը և ուսուցիչները : Երեխաները շատ ոգևորված էին ջերմ ընդունելությունից: Սրահում երեխաները տեսան բազմաթիվ հայ հերոսների նկարներ , ովքեր իրեն կյանքը չեն խնայել հանուն հայրենիքի , տարբեր պատերազմներում : Այնտեղ տեսանք նաև բազմաթիվ հուշամեդալներ և հերոսների փառքի ճանապարհները նկարագրող թաստաթղթերը : Երեխաների ուշադրությունը հրավիրեցինք հատկապես այն հերոսների նկարներին և ձեռագործ աշխատանքներին ,որոնք ստեղծվել են տարբեր տարիների դպրոցական երեխաների ձեռքերով: Այդ նկարները երեխաները կկարողանան վերարտադրել կերպարվեստային գործունեության մեջ : Դպրոցի տնօրենը երեխաներին բացատրեց նաև ցուցադրված բազմաթիվ գավաթներ ինչ հաղթանակներ են բերել մեր դպրոց :

Էքսկուրսիայի ընթացքում դաստիարակվեց հոգատար վերաբերմունք դեպի բնությունը,շրջապատը, սեր հայրենի տարածքի նկատմամբ : Դաստիարակվեց գեղեցիկի հանդեպ հիացմունքի զգացում:Այս նպատակային էքսկուրսիան նպաստեց հայրենասիրության դաստիարակությանը : Մանկապարտեզում հաճախ կազմակերպում ենք էքսկուրսիաներ , հենց խմբասենյակում կամ դահլիճում :

Հերթական էքսկուրսիայի ժամանակ խմբասենյակը դարձել էր փոքրիկ Հայաստան: Պատերին փակցված էին ՀՀ քարտեզներ , մեր ազգային հերոսների նկարները ,ՀՀ տեսարժան վայրերը նկարագրող նկարներ ,որտեղ պակերված են մեր սուրբ առաքելական եկեղեցիները ,

մշակութային մեծ արժեք ունեցող շենքեր և այլն : Կենտրոնական պատին փակցված էին եռագույն դրոշն ու զինանշանը: Կազմակերպվեց խաղ-էքսկուրսիա , որի ընթացքում ներկա էին ՆՈՒՀ-ի տնօրենը և նույն մանկապարտեզի այլ դաստիարակներ : Սկզբում խաղի ղեկավարը `Գիտունիկը երեխաների ուշադրությունը հրավիրեց դեպի հեռուստացույցը : Հնչեց ՀՀ օրհներգը երեխաները ոտքի կանգնեցին բոլորի հայացքները ուղղված դեպի ՀՀ դրոշը , իսկ ձեռքերը սեխմած կրծքին:

Գիտունիկը էքսկուրսիան շարունակեց երեխաների հետ խմբասենյակում շրջելով , դիտելով ցուցադրվող նյութերը և տարբեր հարցեր տալով: Բոլոր երեխաները մասնաքցություն ցուցաբերեցին հարց ու պատասխանների ժամանակ : Այս նպատակային էքսկուրսիան հայրենասիրական գաղափարներ դաստիարակեց նախադպրոցական տարիքի սաների մոտ: Նրանց մեյ արդնացավ հայրենասիրական վեհ զգացմունքներ :

Էքսկուրսիան ավարտելուց հետո , խմբասենյակում տեղի ունեցավ բաց քննարկում , որին մասնակցեցին ՆՈՒՀ-ի տնօրենը ,կրտսեր և միյին խմբերի դաստիարակները : Տնօրենը ողջունեց երեխաներին և գովեստի խոսքեր ուղղեց նրանց , որովհետև նրանք կարոացան ճիշտ ներկայացնել և ցույց տալ իրենց գիտելիքները տրված թեմայի շրջանակներում : ԵՎ նաև այս ողջ ընթացքում համագործակցելով ծնողների հետ , կապ ստեղծվեց ծնող-երեխա – մանկապարտեզ:

ՀԱՅՐԵՆԻՔ ԻՄ ԱՌՈՒՇ
ԱՊՈՍՏՈԼՈՒՄ
21

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական գործնական ուսումնասիրությունների արդյունքում ,եկա այն եզրակացությանը ,որ էքսկուրսիաները,նպատակային զբոսանքները,թեմատիկ մշակույթային այցերը, ավագ նախադպրոցական տարիքի երեխաների հայրենասիրության դաստիարակության գործընթացում շատ կարևոր նշանակություն ունեն: Պետք է եզրահանգել ,որ դրանք կատարում են նույն զարգացնող և դաստիարակող դերը ,ինչ որ պարապմունքները:

Վերջնարդյունքում, երեխաների մոտ ձևավորվում է՝ պատկերացում հայրենի երկրի մասին, բարեկիրթ և հոգատար վերաբերմունք մշակութային արժեքների նկատմամբ: Ձևավորվում է պատասխանատվություն՝ շրջապատի և հայրենի բնության նկատմամբ: Զարգանում է գեղեցիկը գնահատելու զգացողությունը: Երեխաները ակտիվ մասնաքցում են ցուցահանդեսներին, հայրենասիրական միջոցառումներին, կարողանում են արտահայտել սեփական կարծիքը, վերածում են և արձագանքում:

Բայց մենք մատաղ սերնդին դաստիարակող մանկավարժներս, չենք սահմանափակվում այսքանով և հայրենասիրության դաստիարակության գործընթացը շարունակում ենք իրականացնել մեր աշխատանքի գործունեության յուրաքանչյուր ոլորտում :

Մեր աշխատանքի պտուղները՝ հայրենասեր, դաստիարակված սերունդներն են , որոնց շնորհիվ վաղը և միշտ հայրենիք կունենանք:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Նախադպրոցական մանկավարժություն Է.Ա. Ալեքսանդրյանի խմբագրմամբ . Երևան 1992թ.
2. Գ. Ավետիսյան հայրենագիտական աշխատանք
3. Internest.am https://www.internest.am>
4. https://lib.armedu.am>files
5. https://hy.m.wikipedia.org>wiki
6. https://mediamag.am>armenian-ge